



## ԽՆԴԱԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Փետրվարի 2-ին, հինգշաբթի, Երևանի Արվեստի աշխատողների տանը, մայրաքաղաքի և մեր Հայրենիքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի համագումարը:

Համագումարին ներկա էր նաև Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Սծություն Տ. Տ. Վազգեն Ա-ը:

Համագումարը բացեց Կոմիտեի պատասխանատու քարտուղար Ս. Քարամյանը: Ապա ընդարձակ զեկուցումով հանդես եկավ խաղաղության պաշտպանության Ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ գրող Ն. Զարյանը:

Համագումարում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը, ողջունելով հայրենի կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը, օրհնեց աշխարհում խաղաղության բոլոր մարտիկներին և կոչ արեց միացնել բոլոր ջանքերը՝ երկրագնդի վրա ամրապնդելու համար կայուն խաղաղություն:

Համագումարում նույնպես ելույթներ ունեցան ճարտարապետ Մ. Մալմանյանը, Մ. Մելիքյանը, բանաստեղծ Գ. Էմինը, դոկտ.-պրոֆ. Վ. Պարսամյանը, սփյուռքահայ հասարակական գործիչ Օ. Սարյանը, Պետական համալսարանի ուսանողուհի Մ. Թովմասյանը:

Համագումարի մասնակիցները միահամուռ բանաձև ընդունեցին, որով հավանություն էին տալիս Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականության և պահանջում՝ ամենամոտ ապագայում հրավիրել երկրագնդի բոլոր պետությունների կոնֆերանս՝ ընդհանուր և լիակատար զինաթափումը իրականացնելու, հրթիռ-միջուկային պատերազմը կանխելու, սառը պատերազմը իսպառ վերացնելու և ժողովուրդների կյանքում մշտական խաղաղություն հաստատելու համար:

